

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

**Ստուգաթերթ N**

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ (ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ)  
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
(ՏԳՏԴ խմբ. 2՝ ծածկագիր 49, 49.1, 49.2, 49.3)**

< \_\_ > \_\_\_\_\_ 201 թ.

<hr/>		
տեսչության տարածքային մարմնի անվանումը	հասցե	հեռախոս
<hr/>		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
<hr/>		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
<hr/>		
ստուգող անձի պաշտոնը	ազգանուն, անուն, հայրանուն	
Ստուգման սկիզբ (ամսաթիվ) _____ ավարտ՝ _____		
<hr/>		
Տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպա-իրավական տեսակը		ՀՎՀՀ
<hr/>		
Տնտեսավարող սուբյեկտի հասցե		հեռախոս
<hr/>		
Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանուն, անուն, հայրանուն		հեռախոս
Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____		
<hr/>		
երբ է տրված _____		
<hr/>		
Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____		
<hr/>		
<hr/>		

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ) ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ  
ԱՏՈՒԳԱԹԵՐԹ**

	Հարցեր	Այլ	Այլ	Այլ	Կշիռ 10 բալանի համակարգով	Հղումներ նորմատիվ իրավական ակտերին	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
<b>1</b>	<b>Շենքերին, շինություններին, տարածքներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
1	Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտային կազմաներպությունների տարածքները ապահովված են էլեկտրական լուսավորությամբ:				8	«1», գլուխ 1 կետ 19	2	
2	Շինարարական հիմնատարրերը մշակված են հրապաշտպան լուծույթով կամ պատվածքով:				9	«1», գլուխ 3 կետ 27	1,2;3	
3	Սանդղաբազուկների տակ գտնվող տարածքները ազատ են՝ չեն օգտագործվում առարկաների պահման համար:				8	«1», գլուխ 3 կետ 31	2	
4	Արտաքին հրշեջ սանդուղքները գտնվում են սարքին վիճակում:				10	«1», գլուխ 3 կետ 32	2	
5	10 և ավել տեխնիկական սպասարկման կետեր կամ 50 և ավել ավտոմեքենա տեղով ձեռնարկության տարածքը ապահովված է մեքենաների համար նախատեսված երկու մուտքով:				9	«19», կետ 1.3	2	
6	Ավտոմեքենաների կայանման տեղամասերից մինչև այլ նշանակության շենքերի ու շինությունների մինչև հակահրդեհային միջտարածությունները ապահովված են:				10	«3», կետ 6.39 աղ.10	2	I*
7	Նկուղային (ցուցուղային) հարկում 25-ից մինչև 100 ավտոմեքենաների պահման համար նախատեսված է երկու ելք:				9	«19», կետ 2.16	2	
8	Առաջին հարկում 25-ից մինչև 100 ավտոմեքենաների պահման համար նախատեսված է երկու ելք:				9	«19», կետ 2.16	2	
9	Նկուղային (ցուցուղային) հարկում 100-ից ավելի ավտոմեքենաների պահման համար նախատեսված է երկու ելք և մեկ ելք յուրաքանչյուր լրիվ, ոչ լրիվ 100 ավտոմեքենայի համար:				9	«19», կետ 2.16	2	
10	Շարժակազմի պահման սենքերից բացահանման ելքերը նախատեսված են տարակենտրոն:				9	«5», կետ 6.15	2	
11	Ներկման տեղամասը, որտեղ տեղակայված է վառելանյութով աշխատող ներկման-չորացման խուցը, ջերմագեներատորը առանձնացված է մյուս սենքերից:				9	«19», կետ 2.29	2	

12	Պահեստամասերի (ավտոդողեր, քայուղեր, ներկեր և այլն) պահման համար նախատեսված են առանձին տեղամասեր:				9	«19», կետ 2.30	2	
13	50մ <sup>2</sup> մակերեսից ավել ավտոդողերի պահման սենքը տեղակայված է շենքի արտաքին պատի մոտ:				9	«19», կետ 2.30	2	
<b>II Ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի հիմնարկներ</b>								
14	25-ից ավելի տրանսպորտային միջոցների համար նախատեսված շինություններից հրդեհի դեպքում ավտոմեքենաների տարահանման կարգի վերաբերյալ մշակված է տեխաբաշխման հատակագիծ:				9	«1», գլուխ 24 կետ 263	1;2	
15	Մարդատար ավտոմեքենաներում պահվում է մինչև 40լ վառելանյութի պաշար:				9	«1», գլուխ 11 կետ 248	2	
16	Մարդատար ավտոմեքենաներում պահվում է մինչև 10լ յուղի պաշար:				9	«1», գլուխ 11 կետ 248	2	
17	Ձեռքի ծանրոցների (ուղեբեռների) պահասենյակներում դարակաշարերը պատրաստված են չայրվող նյութից:				9	«1», գլուխ 25 կետ 268	2	
18	Գլանատակառոները մշակման տեղամաս տեղափոխման համար նախատեսված ջերմաքարշերը (շարժաքարշերը) սարքավորված են կայծմարիչներով:				9	«1», գլուխ 25 կետ 271	2	
19	Գլանատակառոների բեռնաթափումն իրականացնող երկաթուղու տեղամասը սարքավորված է նավթամթերքի մնացորդի հավաքման հարմարանքներով:				9	«1», գլուխ 25 կետ 273	2	
20	Սարքավորումները (պահոցները խողովակաշարերը, էստակադաները, գլանատակառոները, լցման և դատարկաման երկաթուղիները) էլեկտրաստատիկ լիցքերի կուտակումից զերծ պահելու նպատակով հողանցված են:				9	«1», գլուխ 25 կետ 274	2	
21	Վագոնների կայանման համար նախատեսված երկաթուղային ճանապարհները սարքավորված են հրդեհի դեպքում շարժակազմի տարակենտրոնացումն ապահովող սլաքային գծանցումով:				9	«1», գլուխ 25 կետ 289	2	
22	Բնական և արհեստական ջրաղբյուրներից զուրկ ճանապարհային մեքենակայանների տեղակայման վայրերը ապահովված են հրդեհաշիջման համար պահանջվող 50մ <sup>3</sup> ոչ պակաս ջրի պաշարով:				10	«1», գլուխ 25 կետ 290	2	
<b>III Տարահանման ճանապարհներ</b>								
23	Տարահանման ճանապարհների պատերը և առաստաղները երեսապատված են չայրվող շինանյութով:				9	«1», գլուխ 3 կետ 41	2	

24	Տարահանման ելքերի դոնորը բացվում են դեպի դուրս:				9	«1», գլուխ 3 կետ 40	2	
25	Տարահանման ճանապարհները ազատ են՝ ապահովված է մարդկանց անարգել տեղաշարժը:				9	«1», գլուխ 3 կետ 41	2	
26	Տարահանման ուղիների հատակի 45սմ-ից պակաս տարբերությունը սարքավորված է թեքահարթակով:				9	«5», կետ 6,28	2	
27	Շենքից տարահանման ելքերի քանակը պակաս չէ երկուսից, եթե դրանում տեղավորված են սենքեր, որոնք պետք է ունենան ոչ պակաս քան տարահանման երկու ելք:				9	«5», կետ 6.14	2	II*
28	Սենքերը որտեղ պահվում են տարաներով թարմ (օգտագործված) քսայուղերը տեղակայված են անմիջապես դեպի դուրս ելքով կառույցի արտաքին պատի մոտ:				9	«19», կետ 2.32	2	
29	Նկուղային (ցոկոլային) հարկերից, որոնց սենքերում օգտագործվում կամ պահվում են այրվող նյութեր, առաջին հարկի սենքեր տանող սանդուղքների առջև կառուցված են հրդեհի դեպքում օդի դիմհարով նախամուտք-անցախցեր:				8	«5», կետ 7.23	2	
30	Նկուղային (ցոկոլային) հարկերում վերելակների առջև կառուցված են հրդեհի դեպքում օդի դիմհարով նախամուտք-անցախցեր:				8	«5», կետ 7.26	2	
<b>IV</b>	<b>Էլեկտրասարքավորումներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
31	Հրդեհավտանգ հիմնատարներով տանիքների վրայով օդային էլեկտրահաղորդման գծեր և արտաքին էլեկտրագծեր անցկացված չեն:				8	«1», գլուխ I կետ 48	2	
32	Էլեկտրաբաշխիչ վահանակները կահավորված են գործարանային արտադրության ապահովիչներով:				9	«1», գլուխ I կետ 49	2	
33	Լուսավորության շղթաների սնման և կառավարման մալուխների անցուղիները առանձնացված են:				8	«1», գլուխ I կետ 50	2	
34	Օգտագործվում են ապակե թասակներով և ճկուն հաղորդագծերով շարժական էլեկտրատրուսատուներ:				8	«1», գլուխ I կետ 52	2	
35	Լուսատուներից մինչև այրունակ նյութից պատրաստված կառուցվածքները և իրերը պահպանված է ոչ պակաս քան 0,5 մ հեռավորություն:				9	«1», գլուխ 1, կետ 53	2	
<b>V</b>	<b>Ջեռուցման և օդափոխման համակարգերին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ</b>							
36	Ջեռուցման համար օգտագործվում են գործարանային արտադրության սարքեր:				8	«1», գլուխ 5 կետ 57	2	

37	Օդափոխիչ համակարգի ինքնաշխատ անջատման սարքավորումները գտնվում են սարքին վիճակում:				8	«1», գլուխ 5 կետ 68	2	
38	Այրման արգասիքների թափանցումը սենքեր կանխելու նպատակով օդատարերի վրա տեղադրված են հրակասեցնող կափույրներ:				8	«6», կետ 7.11.1	2	
39	Շենքի միջանցքներում տեղակայված է հակաձխային պաշտպանության համակարգ:				9	«6», գլուխ 8	2	
40	55մ <sup>2</sup> և ավել մակերեսով բնական լուսավորություն չունեցող սենքերում տեղակայված է հակաձխային պաշտպանության համակարգ:				9	«6», գլուխ 8		
41	Վառարանային ջեռուցման ժամանակ օգտագործվում են ծխահեռացման համար նախատեսված անցուղիները:				9	«1», գլուխ I կետ 60	2	
<b>VI</b>	<b>Հակահրդեհային ջրամատակարարման ցանցեր</b>							
42	Շինություններին (այդ թվում նաև հակահրդեհային ջրամատակարարման աղբյուրներին) հրշեջ փրկարարական ուժերի և միջոցների մոտեցումը ստուգվողի կողմից փակված չէ:				10	«5», կետ 8.14	2	
43	25000 մ <sup>3</sup> և ավելի ծավալով շինությունների արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված է ոչ պակաս քան 2 հրշեջ հիդրանտ:				10	«7», կետ 8.16	2	
44	Հիդրանտների տեղակայման համար նախատեսված ջրագծի տրամագիծը փոքր չէ 100 մմ-ից:				10	«7», կետ 8.46	2	
45	500 մ <sup>3</sup> -ից ավելի ծավալով պահեստային շենքերը սարքավորված են հրշեջ ծորակներով կահավորված ներքին հակահրդեհային ջրացանցով, այնպես, որ յուրաքանչյուր կետ ցողվի 2X2,5 վ/վրկ ջրի շիթով:				10	«8», կետ 6.1 աղյ 2	2	
46	Շենքում 12 և ավելի ներքին հրշեջ ծորակների առկայության դեպքում ներքին հակահրդեհային ջրագիծը միացված է արտաքին օղակավորված ջրագծի տարբեր տեղամասերին երկու մուտքագծով:				10	«8», կետ 9.2	2	
47	Ներքին հակահրդեհային ջրագծում ճնշումը բարձրացնող հրշեջ պոմպերի հեռահար գործարկման էլեկտրական թողարկիչները տեղադրված են հրշեջ ծորակների համար նախատեսված արկղերում:				9	«8», կետ 12.22	2	
<b>VII</b>	<b>Հրդեհի ազդանշանման և հրդեհաշիջման համակարգեր</b>							
48	Կախված մակերեսի չափերից տրանսպորտային հիմնարկները սարքավորված են հրդեհաշիջման ինքնաշխատ համակարգով:				10	«1», գլուխ 7 կետ 81	2	III*
49	Կախված մակերեսի չափերից տրանսպորտային հիմնարկները սարքավորված են հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգով:				10	«1», գլուխ 7 կետ 81	2	III*

50	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվում է լիազոր մարմնին:				10	«1», գլուխ 7 կետ 81	2	
51	3000 մ <sup>2</sup> և ավելի մակերեսով տարածք ունեցող տրանսպորտային հիմնարկների հակահրդեհային ինքնաշխատ համակարգերից հրդեհի տագնապի ազդանշանը փոխանցվում է ռադիոկապի միջոցով:				9	«1», գլուխ 7 կետ 81	2	
52	Հակահրդեհային ինքնաշխատ համակարգերը գտնվում են սարքին վիճակում:				9	«1», գլուխ 7 կետ 100	2	
<b>VIII</b>	<b>Հրդեհաշիջման սկզբնական միջոցներ</b>							
53	Օբյեկտն ապահովված է հրդեհաշիջման սկզբնական միջոցներով:				10	«1», բաժին VIII կետ 504	1;2	IV*
54	Կրակմարիչները տեղադրված են հրդեհի հնարավոր օջախներից 30 մետրից ոչ ավելի հեռավորության վրա:				9	«1», բաժին VIII կետ 512	2	
55	Առկա է արտադրական վտանգավոր օբյեկտը արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականը:				9	«9», հոդված 19 կետ ժդ	1	
56	Արտադրական վտանգավոր օբյեկտում առկա է տեխնիկական անվտանգության ամենամյա փորձաքննության դրական եզրակացություն:				9	«9», հոդված 19 կետ ժբ	1	

Ծանոթություն: Նախավերջին սյունակում 1- փաստաթղթային ստուգում:  
2- ակնադիտարկում:  
3- լաբարատոր ստուգում:

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա.

1 – ՀԱԿ- «Հրդեհային անվտանգության կանոններ» - հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի թիվ 263 հրամանով, հավելված 1:

3 – ՍՆԻՊ 2.07.01-89 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»:

5 – ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն»:

6 – ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»:

7 – ՍՆԻՊ 2.04.02-84\* «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառույցներ»:

8 – ՍՆԻՊ 2.04.01-85 «Շենքերի ներքին ջրամատակարարում և կոյուղի»:

9 – «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք ընդունված է 2005 թվականի հոկտեմբերի 24-ին:

19 - ՎՍՆ 01-89 «Ավտոմոբիլների սպասարկման ձեռնարկություններ»:

I\*- Ավտոմեքենաների կայանման տեղամասերից մինչև այլ նշանակության շենքերի ու շինությունների մինչև հակահրդեհային միջտարածությունները.

Շինություններ, որոնցից որոշվում է հեռավորությունը	Հեռավորությունը, մ					
	ավտոկայանատեղերի կամ բաց ավտոկանգառների մուտքերից, ավտոմեքենաների հետևյալ քանակի դեպքում				տեխնիկական սպասարկման կայաններից, հենակետերի հետևյալ քանակի դեպքում	
	10 և պակաս *	11-50	51-100	101-300	10 և պակաս	11-30
Բնակելի շենքեր	10***	15	25	35	15	25
Այդ թվում բնակելի շենքերի առանց պատուհանների ճակատները	6***	10	15	25	15	25
Հասարակական նշանակության շենքեր	6***	10***	15	25	15	20
Հանրակրթական դպրոցներ և մանկական նախադպրոցական հաստատություններ	15	25	25	50	50	**
Առողջապահական հաստատություններ	25	50	**	**	50	**

\* Բայց ոչ պակաս քան 6 մ, հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների անցման համար:

\*\* Որոշվում է պետական հակահամաճարակային կազմակերպության համաձայնությամբ:

\*\*\* Հրակայունության III-V աստիճանի ավտակայանատեղերի համար հեռավորությունը պետք է ընդունել ոչ պակաս քան 12 մետր:

Ծանոթություն.

ա) Հեռավորությունը պետք է որոշել բնակելի և հասարակական նշանակության շենքերի պատուհաններից, հանրակրթական դպրոցների, մանկական նախադպրոցական, առողջապահական հաստատությունների տարածքների սահմանից մինչև ավտոկայանատեղի պատը կամ բաց ավտոկանգառի սահմանը:

բ) Հատվածամասային բնակելի շենքերից մինչև շենքի երկայնական ճակատի երկայնքով տեղակայված 101-300 ավտոմեքենա տարողությամբ բաց հարթակները հեռավորությունը պետք է ընդունել ոչ պակաս քան 50 մետր:

գ) I և II հրակայունության աստիճանի ավտակայանատեղերի համար սույն աղյուսակում նշված հեռավորությունները թույլատրվում է կրճատել 25%-ով, եթե ավտոկայանատեղում բացակայում են բացվող պատուհաններ, ինչպես նաև դեպի բնակելի և հասարակական նշանակության շենքերն կողմնորոշված մուտքեր:

դ) Մարդատար ավտոմեքենաների պահպանման համար 300 և ավելի ավտոմեքենա տարողությամբ ավտոկայանատեղերն ու բաց ավտոկանգառները և 30 և ավելի հենակետերով տեխնիկական սպասարկման կայանները պետք է տեղակայել բնակելի տարածքներից դուրս՝ բնակելի շենքերից ոչ պակաս քան 50 մետր հեռավորության վրա:

ե) Քաղաքացիներին պատկանող մեկ հարկանի ավտոտնակներում թույլատրվում է կառուցել նկուղներ:

II\*- Ոչ պակաս քան երկու տարահանման ելք պետք է ունենան.

ա) տաս մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված մանկական նախադպրոցական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների մասնագիտացված տների (ոչ բնակարանային), հիվանդանոցների, ինտերնատ-դպրոցների և մանկական հիմնարկների ննջարանային մասնաշենքերի սենքերը,

բ) տասնհինգ մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված նկուղային և ցուլուային հարկերի սենքերը, 50 մարդուց ավելի միաժամանակյա ներկայության համար նախատեսված սենքերը,

գ) առավել բազմաթիվ հերթափոխում հինգ մարդուց ավելի աշխատողների թվաքանակով արդյունաբերական և պահեստային շենքերի, կառուցվածքների Ա և Բ կարգի սենքերը, 25 մարդուց ավելի - Վ կարգի կամ 1000 մ<sup>2</sup> ավելի մակերեսով սենքերը,

դ) Արդյունաբերական և պահեստային շենքերի, կառուցվածքների բաց հարկաշարերը և հարթակները, նախատեսված սարքավորման սպասարկման համար, Ա և Բ կարգի սենքերի համար - 100 մ<sup>2</sup> ավելի հարկաբաժնի հատակի մակերեսի դեպքում և 400 մ<sup>2</sup> ավելի - այլ կարգի սենքերի համար,

ե) երկու հարկերում (մակարդակներում) տեղադրված բազմաբնակարան բնակելի շենքերի սենքերը (բնակարանները), վերին հարկի տեղադրման 18 մ-ից ավելի բարձրության դեպքում, դրանք պետք է ունենան տարահանման ելքեր յուրաքանչյուր հարկից:

III\*- հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով օբյեկտների համալրման չափանիշներն են

Պահպանվող օբյեկտների տեսակը	Պահանջվող հակահրդեհային համակարգեր	
	ՀՀԱԻԿ	ՀՏԱԻՀ և ՀՏԱՓԻՀ
	Նորմատիվ ցուցանիշներ	
1. Ավտամեքենաների համար շենքեր և շինություններ		
1.1. Ավտոկայանատեղեր	ՀՀ ՇՆ IV-11.03.03-02 "Ավտոկայանատեղեր" նորմի համաձայն	Անկախ մակերեսից
1.2. Տեխնիկական սպասարկման և նորոգման կետեր,	ՎՍՆ 01-89 "Ավտոմեքենաների սպասարկման ձեռնարկություններ" նորմի համաձայն	Անկախ մակերեսից
1.3 Ավտոմեքենաների պահեստարաններ՝ ստորգետնյա կամ փակ շինություններ	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
2. Տրանսպորտային միջոցների համար սենքեր		



2.1. Էլեկտրամեքենաների, ապարատասրահների, նո-րոգման, սայլակների և անիվների, վագոնների քանդ-ման և հավաքման, նորոգման-համալրման, էլեկտրա-վագոնների, վագոնների նախապատրաստման, դիզել-լային, շարժակազմի տեխնիկական սպասարկման, բեռնարկղային դեպոներ, սլաքային ապրանքների արտադրության, գլանատակառուների տաք մշակման, նավթաբիտումի գլանատակառուների ջերմային մշակման խցերի, փայտակոճերի տոգորման, գլանային, տոգորված փայտանյութի պարզարանների	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
3. Մետրոպոլիտենի վերգետնյա և ստորգետնյա կառույցներ	Ոլորտը կարգավորող նորմերի համաձայն	Անկախ մակերեսից
4. Ավտոմատ համակարգով հսկիչ-կարգավարական կետերի սենքեր, հաղորդակցության հաղորդակցու-ղիների կենտրոններ, ռադիոփարսով մոտակա և հեռակա շարժահաղորդակով ռադիոկայաններ	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
5. Ավիաշարժիչների մոնտաժման և ապամոնտաժման, ինքնաթիռների և ուղղաթիռների շասսիի և անիվների, օդային պտուտակների սենքեր	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
6. Ինքնաթիռների և շարժիչանորոգման արտադրության սենքեր	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
7. Այլ նշանակության շենքերում տեղակայված (բացառությամբ անհատական բնակելի տների) տրանսպորտային միջոցների պահպանման սենքեր, որոնք գտնվում են.		
7.1. Նկուղային և կիսանկուղային հարկերում (այդ թվում կամուրջների տակ)	Անկախ մակերեսից	Անկախ մակերեսից
7.2. Կիսանկուղային և վերգետնյա հարկերում	3 և ավելի ավտոմեքենաների պահպանման դեպքում	3-ից պակաս ավտոմեքենաների պահպանման դեպքում

IV\*- Շենքերը և շինությունները ձեռքի կրակմարիչներով ապահովելու չափանիշները ներկայացված են ստորև ներկայացված աղյուսակներում.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ <sup>2</sup>	Հրդեհի դասը	Փոփրային և ջրային կրակմարիչներ 10 և 10-ից ավելի տարողությամբ	Փոշային կրակմարիչներ տարողությամբ, և			Ֆրեոնային կրակմարիչներ 2(3) և տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ և:	
					2	5	10		2	5(8)
1	Ա.Բ.Վ. այրվող գազեր և	200	A	2++	-	2+	1++	-	-	-
			B	4+	-	2+	1++	4+	-	-
			C	-	-	2+	1++	4+	-	-

	հե- ղուկներ		D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2+	1++	-	-	2++
2	Վ	400	A	2++	4+	2+	1+	-	-	2+
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	-	2++	1+	2+	4+	2++
3	Գ	800	B	2+	-	2++	1+	-	-	-
			C	-	4+	2++	1+	-	-	-
4	Գ.Դ.	1800	A	2++	4+	2++	1+	-	-	-
			D	-	-	2+	1++	-	-	-
			(E)	-	2+	2++	1+	2+	4+	2++
5	Հասարակական շենքեր	800	A	4++	8+	4++	2+	-	-	4+
			E	-	-	4++	2+	4+	4+	2++

Սույն աղյուսակում ամրագրված՝ տարբեր դասերի հրդեհների մարման համար փոշային կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում, «A» դասի համար ABC(E) փոշի, «D» դասի համար՝ (D):

Սույն աղյուսակում.

ա) «+++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

Շենքերը և շինություններն, ըստ մակերեսի, օդափրփրային, համակցված, փոշե, և ածխաթթվային կրակմարիչներով ապահովվում են համաձայն հետևյալ աղյուսակի.

N	Շինության կարգը	Պաշտպանվող սահմանային մակերեսը, մ <sup>2</sup>	Հրդեհի դասը	Օդափրփրային կրակմարիչներ (փրփուր) 100 լ տարողությամբ	Համակցված կրակմարիչներ (փրփուր, փոշի) 100 լ տարողությամբ	Փոշե կրակմարիչներ 100 լ տարողությամբ	Ածխաթթվային կրակմարիչներ, տարողությամբ լ.	
							25	80
1	Ա,Բ,Վ (այրվող գազեր և հեղուկներ)	500	A	1++	1++	1++	-	-
			B	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	2+	-	-
2	Գ (բացի այրվող գազերից և հեղուկներից)	800	A	1++	1++	1++	-	-
			D	2+	1++	1++	-	-
			C	-	1+	1++	-	-
			D	-	-	1++	-	-
			E	-	-	1+	-	-

Սույն աղյուսակում ամրագրված տարբեր դասերի հրդեհների օջախների հրդեհաշիջման համար փոշու և համակցված կրակմարիչները պետք է ունենան համապատասխան լիցքավորում.

1) «A» դասի համար՝ ABC(E) փոշի.

2) «B», «C» և «E» դասի համար՝ BC(E) կամ ABC(E) փոշի.

3) «D» դասի համար՝ D փոշի:

Սույն աղյուսակում.

ա) «++» նշանով նշված են օբյեկտների ապահովման համար առաջարկվող կրակմարիչները.

բ) «+» նշանով նշված են կրակմարիչներ, որոնց օգտագործումը թույլատրվում է առաջարկվող կրակմարիչների բացակայման և համապատասխան հիմնավորման դեպքում.

գ) «-» նշանով նշված են կրակմարիչներ, որոնցով չի թույլատրվում ապահովել օբյեկտները:

## ՈՒՂԵՑ ՈՒՅՑ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ (ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ) ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ  
ԱՏՈՒԳԱԹԵՐԹԻ

Սույն ստուգաթերթում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) այրվող նյութ՝ ինքնուրույն, կրակի աղբյուրի հեռացումից հետո այրվող նյութ:
- 2) հակահրդեհային միջտարածություն՝ շինությունից դեպի հարևան շինություններ կրակի տարածումը կանխարգելելու նպատակով նախատեսված տարածություն:
- 3) հրդեհաշիջման և հրդեհի ազդանշանման ինքնաշխատ կայանքներ (ՀՀԱԻԿ)՝ նախատեսված են հրդեհաշիջման և հրդեհի վայրի հայտնաբերման համար:
- 4) հրդեհի տագնապի ազդարարման ինքնաշխատ համակարգ (ՀՏԱԻՀ)՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդարարման համար:
- 5) հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգ (ՀՏԱՓԻՀ)՝ նախատեսված է հրդեհի տագնապի ազդանշանը օբյեկտից կապի որևէ հնարավոր միջոցով լիազոր մարմնին հաղորդման համար:
- 6) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն:
- 7) հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, արկղ ավազով, դույլ, բահ, **կեռածող**, կացին: